ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԳԱՅԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА
АРМЕНИИ
АРМАВИРСКАЯ ОБЛАСТЬ
ОБЩИНА ГАЙ

«05» մարտի 2013 թ.
թիվ 25

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն Ղահրամանյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայի գյուղական համայնքի ղեկավարի 2013 թվականի փետրվար ամսվա ընթացքում ընդունած որոշումները, կարգադրություններ չեն արձակվել:

Առդիր 7 թերթ:

Գայի գյուղական համայնքի ղեկավար՝ Ս. Մարկոսյան

Մուտք թիվ 2182-13
«06» 03 2013

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
## ԳԱՅ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

« 27» փետրվարի 2013 թվականի

# Ո ր ո շ ու մ N 07

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՕՖԻԿ ԱՐՄԵՆԱԿԻ ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով և «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» 2008 թվականի հունիսի 10-ի Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով և հաշվի առնելով որ հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, բավարարում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման կարգով սահմանված և սույն որոշման 22-րդ կետի 1-ին ենթակետին և հաշվի առնելով քաղաքացի Օֆիկ Արմենակի Դանիելյանի 2013 թվականի փետրվարի 15-ի դիմումը.

### Ո ր ո շ ու մ եմ՝

1. Վերականգնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայի գյուղական համայնքի Գարնանային 3 փողոց, տուն 5 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ քաղաքացի՝ Օֆիկ Արմենակի Դանիելյանի (ծնված 01.01.1938թ.)գույքային իրավունքները՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը օրինական 0.17 հա հողամասի և կից ինքնակամ զբաղեցրած 0.0395 հա հողամասի և օրինական հողամասի վրա կառուցված բնակելի տան և կից շենք – շինությունների նկատմամբ /բնակելի տունը կառուցվել է 1961թ./:

Բնակելի տունը և շենք-շինությունները բավարարում են «Հայաստանի Հանրապետության համայնքային վարչական տարածքներում իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1 և 2 հոդվածների պահանջները: Հողամասը չի ընդգրկված Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված

հողերի ցանկում: Կառույցները չեն հակասում քաղաքաշինական նորմերի, չեն առաջացնում սերվիտուտ:

2. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման համապատասխան որակավորում ստացած անձի կողմից:
3. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճար չի սահմանվում:
4. Առաջարկել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան մարզային ստորաբաժանմանը գրանցել Օֆիկ Արմենակի Դանիելյանի (ծնված 01.01.1938թ.) սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված օրինական հողամասի վրա ինքնակամ կառուցված բնակելի տների շենք-շինությունների նկատմամբ, տրամադրելով անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գայի գյուղական համայնքի ղեկավար՝ Ս. Մարկոսյան

2013 թվական
մարտի 5-ին
գ. Գայ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԳԱՅ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

« 12» փետրվարի 2013 թվականի

# Որոշում N 6

## ՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 16-րդ կետով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Արևիկ Ազիզյանի 2013 թվականի փետրվարի 11-ի դիմումը.

Որոշում եմ՝

1. Արմավիրի մարզի Գայի գյուղական համայնքի վարչական տարածքում գտնվող կԾ 04-033-044-001-ից բաժանված 905.0 քմ տնամերձ հողամասին տալ հասցե՝ Երևանյան 4 փողոց, թիվ 2/2:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գայի գյուղական համայնքի ղեկավար՝ Ս. Մարկոսյան

2013 թվական
մարտի 5-ին
գ. Գայ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԳԱՅ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

« 12» փետրվարի 2013 թվականի

# Որոշում N 5

## ՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 16-րդ կետով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Գասևան Ազիզյանի 2013 թվականի փետրվարի 11-ի դիմումը.

Որոշում եմ՝

1. Արմավիրի մարզի Գայի գյուղական համայնքի վարչական տարածքում գտնվող ԿԾ 04-033-044-001-ից բաժանված 869.0 քմ տնամերձ հողամասին տալ հասցե՝ Երևանյան 4 փողոց, թիվ 2/1:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գայի գյուղական համայնքի ղեկավար՝ Ս. Մարկոսյան

2013 թվական
մարտի 5-ին
գ. Գայ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԳԱՅ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

« 12» փետրվարի 2013 թվականի

# Որոշում N 4

## ՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 16-րդ կետով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Գասնան Ազիզյանի 2013 թվականի փետրվարի 11-ի դիմումը.

Որոշում եմ՝

1. Արմավիրի մարզի Գայի գյուղական համայնքի վարչական տարածքում գտնվող ԿԾ 04-033-044-001, 36.0քմ տնամերձ հողամասին տալ հասցե՝ Երևանյան 4 փողոց, թիվ 2:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գայի գյուղական համայնքի ղեկավար՝ Վ. Մարկոսյան

2013 թվական
մարտի 5-ին
գ. Գայ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԳԱՅ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

« 11» փետրվարի 2013 թվականի

## Որոշում N 03

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՄԵՆ ՍՈԿՐԱՏԻ ՍԱՀՐԱԴՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով և «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» 2008 թվականի հունիսի 10-ի Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով և հաշվի առնելով որ հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, բավարարում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման կարգով սահմանված և նույն որոշման 22-րդ կետի 1-ին ենթակետին և հաշվի առնելով քաղաքացի Արմեն Սոկրատի Սահրադյանի 2013 թվականի փետրվարի 05-ի դիմումը.

Որոշում եմ՝

1. Վերականգնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայի գյուղական համայնքի Մ. Գորկու 1 փողոց, տուն 6 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ քաղաքացի՝ Արմեն Սոկրատի Սահրադյանի (ծնված 27.06.1967թ.) գույքային իրավունքները՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը օրինական 0.14 հա հողամասի օրինական հողամասի վրա կառուցված բնակելի տան և կից շենք – շինությունների նկատմամբ / բնակելի տունը և օժանդակ շինությունը կառուցվել է 1988թ./:

Բնակելի տունը և շենք-շինությունները բավարարում են «Հայաստանի Հանրապետության համայնքային վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1 և 2 հոդվածների պահանջները: Հողամասը չի ընդգրկված Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի ցանկում: Կառույցները չեն հակասում քաղաքաշինական նորմերի, չեն առա-

ջացնում սերվիտուտ:

2. *Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման համապատասխան որակավորում ստացած անձի կողմից:*
3. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճար չի սահմանվում:
4. Առաջարկել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան մարզային ստորաբաժանմանը գրանցել Արմեն Սոկրատի Սահրադյանի (ծնված 27.06.1967թ.) սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված օրինական հողամասի վրա ինքնակամ կառուցված բնակելի տների շենք-շինությունների նկատմամբ, տրամադրելով անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:
5. *Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:*

Գայի գյուղական համայնքի ղեկավար՝ Ս. Մարկոսյան

2013 թվական
մարտի 5-ին
գ. Գայ